ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՑԱՎԱԿՑՈՒՄ Է ՓԱՍՏԱԲԱՆ ՍԵԴՐԱԿ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

09.04.2021 17:50

Ցավով տեղեկացանք, որ 2021 թվականի ապրիլի 9-ին կյանքից հեռացել է մեր գործընկեր **փաստաբան Սեդրակ Ասատրյանը**:

Սեդրակ Ասատրյանը 2008 թվականից հանդիսանում է փաստաբան, իսկ 2017 թվականից՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ: **Սեդրակ Ասատրյանը** «Կոնցեռն-Դիալոգ» փաստաբանական գրասենյակի համահիմնադիրն է և բազմամյա ղեկավարը, բազմաթիվ հոդվածների, ինովացիոն առաջարկությունների հեղինակ էր, ինչպես նաև «ՀՀ Նոր աշխատանքային օրենսգիրք, Աշխատանքային պայմանագրեր» և «ՀՀ Նոր աշխատանքային օրենսգիրք, Գործատուի ներքին և անհատական իրավական ակտեր») և «Փաստաբանական գրասենյակի կառավարում» գրքերի համահեղինակ:

Սեդրակ Ասատրյանը հատկապես կարևորում էր երիտասարդներին, իրեն էլ համարում էր երիտասարդ:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, այդ թվում՝ խորհրդի կազմը և աշխատակազմը ցավակցություն ու զորակցություն է հայտնում **Սեդրակ Ասատրյանի** ընտանիքին, հարազատներին ու ընկերներին:

Սեդրակ Ասատրյանի հոգեհանգստի արարողությունը տեղի կունենա **2021 թվականի ապրիլի 10-ին, ժամը 16:30-ից՝ Սարդարապատի (նախկին Հոկտեմբեր) Սուրբ Աստվածածին եկեղեցում**, իսկ հուղարկավորությունը տեղի կունենա **2021 թվականի ապրիլի 11-ին ժամը 14:00-ին**՝ նույն եկեղեցուց:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })